Ծիսական հարցերի հանձնախմբի անդամներն են՝

Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Օհանյանը (համապատասխանող).

Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը (համապատասխանող).

Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը.

Տ. Գեղամ արքեպիսկոպոս Խաչերյանը.

Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը.

Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը.

Տ. Գրիգոր ծայրագույն վարդապետ Չիֆթճյանը.

Տ. Վահան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանը:

Հանձնախումբը քննարկեց Մկրտության եւ Դրոշմի արարողության միօրինակ տեքստի պատրաստության, խորհրդի հետ առնչված կանոնական-բարեպաշտական ավանդույթների կանոնակարգման հետ կապված հարցեր: Որոշվեց հետագա աշխատանքների համար որպես հիմք ընդունել Մկրտության եւ Դրոշմի արարողությունների վաղագույն բնագրերը, ինչպես նաեւ ներկայիս գործածության մեջ գտնվող տեքստերը:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՒ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԺՈՂՈՎԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ եւ բարձր տնօրինությամբ 2005 թ. ստեղծված կանոնական հանձնախումբը սույն թվականի օգոստոսի 18-19-ը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարեց իր հերթական ժողովը:

Համատեղ հանձնախմբի նպատակն է իր աշխատանքով նպաստել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սրբազան առաքելության առավել ծաղկմանը եւ ներքին միասնականության ամրապնդմանը, Հայ Եկեղեցու կյանքում առկա կանոնական խնդիրների քննությանն ու լուծումների առաջադրմանը:

Կանոնական հանձնախմբի անդամներն են՝

Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը (ատենապետ).

Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը (ատենապետ).

Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը (ատենադպիր).

Տ. Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը (ատենադպիր).

տիար Ջիմ Գալուստյանը.

տիար Արսեն Դանիելյանը.

տիար Նիկոլայ Հովհաննիսյանը.

տիար Տիգրան Ջինբաշյանը:

Օգոստոս 18-ին, Վեհարանում ժողովի մասնակիցներին ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը, Հայրապետական իր օրհնությունը բերելով ժողովականնե-

բին, բարի արդյունավորում մաղթեց ժողովի աշխատանքներին: Հանդիպման ընթացքում Օշական Սրբազանը Վեհափառ Հայրապետին փոխանցեց Արամ Ա Վեհափառ Հայրապետի եղբայրական ողջույնները:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Ատենապետերի ողջույնի խոսքերից հետո «Հայ Եկեղեցու կանոնական վիճակը (հայ եկեղեցաբանության սահմանումը)» թեմայի շուրջ հանձնախմբի ուշադրությանը զեկույցներ ներկայացրեցին Տ. Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը («Ընդհանուր ներածական եւ եկեղեցաբանության աստվածաշնչական հիմերը»), Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը («Հայ Եկեղեցու աստվածաբանական-եկեղեցաբանական սահմանումը») եւ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը («Հայ Եկեղեցու գործնական արտահայտությունը ներկայիս»): Յուրաքանչյուր զեկուցումից հետո զեկուցողները պատասխանեցին ժողովականների հարցումներին: Տեղի ունեցավ մտքերի փոխանակում եւ ընդհանուր քննարկում:

Ժողովի ավարտին, ելնելով ժողովի աշխատանքի ջերմ, կառուցողական մթնոլորտից եւ արդյունքներից, ժողովականները համոզում հայտնեցին, որ որդեգրած առաջադրանքների իրագործումը մեծապես պիտի նպաստի Հայ Եկեղեցու հզորացմանը եւ միասնականությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ